ԱՆԻ ՖԻՇԵՆԿՇՅԱՆ

ՍԻՐԻԱՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ 1920-1980թթ.

Սիրիահայ համայնքը իր ողջ գոյութեան ընթացքում ստեղծել է կրթադաստիարակչական հիմնարկութիւնների լայն ցանց, որը վկայում էր սիրիահայութեան կրթասիրութեան եւ կենսունակութեան մասին:

Ա. Աշխարհամարտից յետոյ Կիլիկիայի հայ տարագիրները հաւատալով անգլիական եւ Ֆրանսական իշխանութիւնների խոստումներին, վերադառնում են հայրենիք:

Հալէպը, որ Սիրիայի երկրորդ մեծ քաղաքն էր համարւում, դարձել էր տարագիր հայութեան կազմակերպման երեք կենտրոններից մէկը, եւ վերոյիշեալ թուականներին արդէն գրաւուել էր Անգլիական բանակի կողմից: Նախկին թրքական զօրակայանները արդէն վերածուել էին գաղթականների, սակայն, բացի այս, դրսում դաշտերում ու վրաններում ապրողները սպասում էին իրենց մեկնումի օրուանը: Սիրիայում հայերի տեղաբաշխումը միատարր էր: Ընդունուած իրողութիւն էր, որ շուրջ 90 առ հարիւրը համախմբուած են եղել Հալէպում. իսկ մնացեալը գլխաւորաբար Սիրիայի այլ շրջաններում:

Հալէպ էին խուժում Միջագետքից, Սիրիայի ներքին շրջաններից եւ Պաղեստինից: 1918-1924թթ. Հալէպում համախմբուող հայ ազգաբնակչութեան թուաքանակը հաշւում էր 100-125 հազար հոգի: Սակայն ծննդավայր վերադարձողների շարժման պատճառով երկար տասնամեակներ Հալէպում հայ բնակչութեան թիւը 50-60 հազար էր:

Հակառակ գաղթականների մէկ մասի մեկնումին, հայի կեանքը շարունակւում էր քէմբերում: Քէմբերում կեանքը տեւում է երկար տարիներ (մինչեւ 1935թ.), ոչ միայն Սիրիայում, այլ Լիբանանում եւ Յունաստանում:

Հանրային կեանքը, որը համարուել էր անդամալուծուած Հալէպում եւ այլ շրջաններում, բացարձակ գոյութիւն է դառնում անգլիացիների գրումից անմիջապէս յետոյ: Գաղթականներում տեղադրուած 50 հազարից աւելի որբերի խնամքը յանձնուել էր հայրենակցական զանազան միութիւնների: Այլատեսակ բարքերով ու սովորութիւններով, զանազան լեզուներ խօսող,

տարիքի լայն աստիճանաւորումով՝ (5-18 տարեկան) որբերի ղեկավարման եւ կազմակերպման գործը հեշտ չէր ընթանում, որբանոցը այս առումով պէտք է կատարէր դերը կրթարանի եւ արհեստանոցի: Բայց մայրենի լեզուի չիմացութիւնը ընդհանրացած երեւոյթ էր, որբանոցների, դասաւանդութիւնը կատարւում էր շատ նախնական ձեւով, ընդհանրապէս ուժ էր տրւում արհեստներին:

Սիրիայի հայկական առաջին դպրոցը հիմնուել է, ժէ. դարի առաջին կէսին. Հալէպում, Ս. Քառասնից Մանկանց եկեղեցուն կից յայտնի «Դպրատուն» եւ «Դասատուն» անուններով: 1876ին: Դպրոցը անուանակոչուելէ Ազգ. Ներսէսեան վարժարան: Ունեցել է երեք ենթամաս՝ ծաղկոց, երկսեռ մանկապարտէզարական եւ իգական դասարաններ[1]: 1920ին միացել է Աւետարանական եկեղեցու Հայկազեան վարժարանին եւ վերանուանուել «Ազգ. Հայկազեան Երկսեռ Վարժարան»: Դպրոցին կից 1904թ. հիմնուել է մանկապարտէզ:

Դամասկոսում հիմնուել է «Ազգ. Թարգմանչաց» դպրոցը 1898ին. ընդհատումներով գործել է մինչեւ 1915թ.: Վերաբացուել է 1922ին[2]: Դամասկոսում նոյնպէս հիմնուել է Հայ Կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ արական վարժարանը, 1863ին: Համանուն վարժարանի իգական բաժանմունքը՝ 1922թ.: Աւելի ուշ, 1954թ. Դամասկոսում հիմնուել է «Սահակեան Վարժարանը», որը պատկանում էր ՀԲԸՄիութեան: 1929ին՝ «Ազգ. Միացեալ Վարժարան»ը, իսկ 1937-1938 ուսումնական տարեշրջանում հիմնել են մանկապարտէզն ու նախակրթարանը[3], որը հետագայում ստացել է «Ջաւարեան Վարժարան» անունը:

Բ. Աշխարհամարտի տարիներին վարժարանը դադարել է գործելուց եւ վերաբացուել 1951ին: Աշակերտների թուաքանակի նուազեցման պատճառով փակուել է եւ 1979ին կրկին վերաբացուել, բայց միացուել է Ազգ. Միացեալ վարժարանին:

Ի. դար քսանական թուականներին հայ տարագիրները, արդէն, սկսել էին հիմնադրել իրենց առաջին դպրոցները: Կեանքի կայունացման հետեւանքով՝ 1928-1929թթ. Հալէպում գործում էին 8 դպրոց, իսկ մնացեալ քաղաքներում 34

---

[1] «Օշական» Պարբերաթերթ Ազգ. Առաջնորդարանի. Հալէպ, ԺԱ. տարի, թիւ 1-2/33-34/, Յունիս 1988, էջ 39-40.

[2] «Օշական» Պարբերաթերթ ԺԲ. տարի թիւ 1-2/35-36/ Սեպտեմբեր-Հոկտեմբեր 1989, էջ 44-45.

[3] «Օշական» նոյն տեղում էջ 46.

դպրոցներ Առաքելական, Աւետարանական եւ Կաթողիկէ համայնքներին պատկանող, ուր սովորում էին շուրջ 6523 երեխաներ[4]:

Արհաւիրքի օրերին յառաջ եկած հայրենակցական միութիւնները իրենց նիւթական մեծ նպաստների կողքին չէին զլացել առաջին դպրոցների ձեռնարկումներին, մասնաւորաբար գաղթականներում: Երեխաների կրթութեամբ զբաղուել են երեք յարանուանութիւնների առաջնորդարանները:

Քննարկուող ժամանակաշրջանում տարբեր յարանուանութիւնների կամ հայրենակցական միութիւնների կողմից ղեկավարուող հաստատութիւններ՝ միջնակարգերկրորդական դպրոցներ, արդէն, գործում էին Հալէպում, Քէսապում, Դամասկոսում, Հոմսում եւ այլ շրջաններում: 1924-1925թթ. միայն Հալէպում գործում էին 10 Առաքելական, 5 Աւետարանական եւ 4 Կաթողիկէ համայնքներին պատկանող վարժարաններ[5]:

Վիճակագրական ցուցակէն երեւում է, թէ Սիրիահայ վարժարանները ընդհանրապէս համայնական են եղել, որոնց ղեկավարութիւնը պատկանել է տարբեր կուսակցութիւնների ու կազմակերպութիւնների: Այդ դպրոցների թւում էին պատկանում հայոց ազգային վարժարանները, որոնք ենթակայ էին Առաքելական համայնքին. հայ կաթողիկէ եւ հայ Աւետարանական համայնքներինը, ՀԲԸՄիութեան վարժարանները: Որոշ դպրոցներ ոչ համայնական, այլ կուսակցական միութիւնների հովանաւորութիւնն էին վայելում. Ռամկավար Ազատական եւ հնչակեան կուսակցութեանց խնամակալութեան ներքոյ:

1920-ական թուականներին գոյութիւն է ունեցել գիշերային բաժնի լսարաններ, անհատական նախաձեռնութեամբ, ուր դասաւանդել են տարրական գիտելիքներ[6]:

Սիրիայի հայ ազգային վարժարանները բնոյթով ծխական են եղել, այսինքն իւրաքանչիւր ազգային վարժարան սկզբունքով կապուած է եղել հայ առաքելական եկեղեցւոյ թեմում եւ գտնւում է նրան հովանաւորութեան ներքոյ: Ուսումադաստիարակչական հարցերով ազգային վարժարանները ենթակայ են եղել թեմական ուսումնական խորհրդի: Ուսումնական խորհրդի պարտականու-

---

[4] Տե՛ս «Սուրիական Ալպոմ» Գ. տարի, 1929, Հալէպ, թիւ 3.

[5] Թոփուզյան Խ. Հ «Սիրիայի եւ Լիբանանի Հայկական Գաղթօջախի Պատմություն», Երեւան, 1986 էջ 274-275-276.

[6] «Հայաստանի Կոչնակ» ԻԸ. տարի, օգոստոս 11-1928, թիւ 32, էջ 11-19.

թիւնների մէջ են մտել դպրոցների համար կանոնագրերի եւ ծրագիրների կազմումն ու նրանց գործադրումը. նաեւ դրա համապատասխան դասագրքերի հրատարակումը: Խորհրդի իրաւասութեան սահմանների մէջ է եղել, կրթական գործերով անմիջական կապ հաստատել թաղական խորհրդների, վարժարանների հոգաբարձութեանց հետ: Նաեւ կրթադաստիարակչական հարցում համապատասխանաբար ենթարկւում էին համայնքներում գործող միութիւնների եւ կուսակցութիւններին:

Սիրիայի բոլոր հայկական դպրոցներում գործադրւում է Սիրիայի պետական կրթական ծրագիրը, իսկ քննութիւնները համապատասխանում են պետական քննութիւններին: Վարժարաններէն ներս պետական ծրագրին զուգահեռ դասաւանդում է Հայոց Լեզուն՝ նպատակ ունենալով երեխաներին ջամբել հայեցի դաստիարակութիւն «Տղաքը ընդհանրապէս Կիլիկեցի, թրքախօս ծնողներին էին պատկանում եւ հայերէն խօսիլ սովորում էին վարժարանում»[7]:

Մինչեւ քառասունական թուականների կէսը հայերէնից յետոյ նախապատրաստութիւն էր տրուէր Ֆրանսերէնին: Ֆրանսերէնը գաղութային իշխանութիւնների կողմից սահմանուած պետական պաշտօնական լեզուն էր հռչակուել նախնական, միջնակարգ եւ բարձրագոյն կարգերի: 1925թ. Հալէպում Ազգային ուսումնական խորհրդի պատրաստած կրթական ծրագրում, նոյնպէս նախապատուութիւն էին տուել Ֆրանսերէնին[8]: «Սուրիական Մամուլ»ը «Սորվինք Տեղական Լեզուն» յօդուածում քննադատում է այն, որ Սիրիայի հայ վարժարանները արաբերէնին չեն տուել այն տեղը, որը իրաւունք ունէր եւ որը պահանջում էր մեր շահն իսկ»[9]:

1929թ. Սիրիայի հիւսիս-արեւելեան գաւառներում սկիզբ է առնում գաղթականների նոր հոսք մեծ մասամբ քրտախօս հայերէ: Սրանք ապաստան գտնելով Գամիշլիի շրջակայքում ծնունդ են տուել 25ից աւելի աւանների ու ծխական դպրոցների, որոնք գոյատեւել են մինչեւ հայրենադարձութիւն՝ 1946թ.:

---

[7] «Մերձաւոր եւ Միջին Արեւելքի Երկիրներ եւ ժողովուրդներ», Զ. հատոր, Երեւան, 1970թ. էջ 255.

[8] 1918թ. Հոկտեմբեր, յատուկ հրամանագրով բոլոր դպրոցներում թուրքերէնի 30 դասաժամերի 8-14 տրամադրւում էր Ֆրանսերէնի. համաձայն տեղական պայմաններին, քանզի 1919թ. աւարտական քննութեանց ժամանակ հիմնական լեզուն Ֆրանսերէն է եղել, իսկ արաբերէնը դառնում է օժանդակ լեզու՝ համահաւասար անգլերէնի, յունարէնի, Իտալերէնի եւ հայերէնի:

[9] «Սուրիական Մամուլ», 8-Մարտ-1925..

Ֆրանսական պետական ծրագիրի կիրարկումով նախակրթարանի երկսեռ աշակերտութիւնը ամէն տարուան աւարտին մասնակցում էր «սերթիֆիքա»ի քննութեան. տեղի էր ունենում բաւականին խիստ հսկողութիւն բարձ գոմիսարութեան հովանաւորութեամբ: Յիսունական թուականների աւարտին փոխարինւում է արաբական «սերթիֆիքա»ով. իսկ 1959ից յետոյ այս օրէնքը վերանում է: Գաղութի տեղաշարժերը, պառակտումների դարմանումը եւ նիւթական միջոցների տնտեսումի անհրաժեշտութիւնը պատճառ են եղել, որ ժամանակի ընթացքում դպրոցներից շատեր սկսուեն անհետանալ, ուրիշներ կորիզը դառնան արդի վարժարաններին:

Բ. Աշխարհամարտի տարիներն եւ յատկապէս քառասունական թուականների կէսերին գաղութի վերաշխուժացմանը պատճառաւ նորեկները ձեռնարկում են դպրոցական ցանցի վերակազմութեան: Այս գործում խթանող ուժը դառնում է Հալէպում Ազգ. Առաջնորդարանը, որը երկար խորհրդածութենէ ու լուրջ աշխատանքից յետոյ 1947ին յաջողւում է բաց անել գաղութի առաջին միջնակարգ-երկրորդական վարժարանը Քարէն Եփփէ Ազգ. ճեմարանը: Սա նշանակում էր, որ յետայսու հայ առաքելական եկեղեցւոյ զաւակները կարողանում էին նոյն յարկում ստանալ պետական եւ հայկական իրենց դաստիարակութիւնը, այլ խօսքով նրանք ձերբազատւում էին օտար վարժարաններ կամ օտար ափեր ճամբորդելէ: Երեւոյթը վարակիչ կը լինի եւ 1950-1960ական թթ. գաղութը օժտւում է երկու այլ երկրորդական վարժարաններով Լազար Նաճարեան Գալուստ Կիւլպէնկեան եւ Կիլիկեան[10]:

Բ. Աշխարհամարտի տարիներին անընդհատ աւելանում էր սովորողների քանակը եւ համայնքները մեծ գումարներ յատկացնում են տարեց-տարի աճող պիտճէն ծածկելու, հակառակ այն իրողութեան որ «1939-1941թթ. կրթական յարկերը մատնուել էին տնտեսական տագնապի»[11]:

1944թ. կրթական տարեշրջանում հայ Առաքելական եկեղեցւոյ Բերիոյ եւ Դամասկոսի թեմերու պիւտճէն հաշւում էր 356,850ս.ո եթէ աւելացնենք հայ

---

[10] Լազար Նաճարեան Գալուստ Կիւլպէնկեանի նախակրթարանը հիմնուել է 1952թ.: 1960ից յետոյ միջնակարգ եւ երկրորդական բաժանունքը: Կիլիկեան ճեմարանը 1921ից գոյութիւն է ունեցել, որպէս տարրական. իսկ 1960թ. օժ-տւում է երկրորդական բաժանունքով:«Օշական» Պարպերաթերթ, ԺԱ. կարի, թիւ 1-2/33-34/ Յունուար-Յունիս, 1988թ., Հալէպ, էջ 36.

[11] «Հայաստանի Կոչնակ» ԽԵ. տարի, թիւ 50, 15-Դեկտեմբեր-1945թ., էջ 1164.

կաթողիկէ եւ հայ Աւետարանական եկեղեցւոյ պիտծէն հասնում է 400,000ս.ո.[12]: 1953-1954թթ. սիրիահայ առաքելական եկեղեցւոյ պատկանող կրթօճախների թիւն էր 48, շուրջ 7400 աշակերտութեամբ[13]: Իսկ 1947-1948 տարեշրջանում Հալէպում եւ շրջակայքում կրթօճախների թիւը 41 էր շուրջ 6,560 աշակերտներով[14]: Հալէպում գործող հայ կաթողիկէ համայնքի ութ վարժարաններից բացի Գամիշլիում, Հասիչէում, Տէրզէսիում, Քէսապում եւ այլուր գործում էին համանուն համայնքի պատկանող օճախներ: Սակայն այս վարժարաններում հայ աշակերտների կողքին արբախօս քրիստոնեայ երեխաների ներկայութիւնը ստուար թիւ էր կազմել:

1950-1960ական թթ. ազգային կրթական ճակատը տագնապալից տարիներ ապրեց: Սիրիայի կրթական նախարարութեան կողմից առաքուած հրամանագիրը մտահոգել էր ղեկավարութիւնը[15]: Մինչեւ 1940ական թթ. կէսերը դպրոցներում հիմնական շեշտը դրուել էր հայոց լեզուի եւ հայագիտական առարկաների վրայ: Արաբերէն լեզուի ուսուցումը հայկական կրթօճախներում նախնական էր եւ ոչ պարտադիր: Հայագիտական առարկաների ցուցակին մաս էին կազմում հայոց պատմութիւնը, աշխարհագրութիւնը, եկեղեցու պատմութիւնը, մաթեմատիկան եւ այլ նիւթեր: Նոր օրէնքը շեշտում էր արաբերէն լեզուի ուսուցման ու ընդհանրացման կարեւորութիւնը մասնաւոր դպրոցներում: Օրէնքը միտում էր համայնքային դպրոցների վերահսկողութեանն ու տնօրինմանը «Կրթական նախարարութիւնը որոշել է ուսումնական, առողջապահական եւ մանկավարժական հսկողութեան տակ առնել բոլոր մասնաւոր դպրոցները, կրթական քննիչները պետական վարժարանների նման քննութիւն պիտի անցկացնեն վերոյիշեալ վարժարանների մէջ»[16]: Սահմանուած օրէնքով պետական պաշտօններից եւ համալսարանական կրթութիւնից զրկւում էին բոլոր նրանք, ովքեր վկայուել էին օտար եւ մասնաւոր

---

[12] Եղիայեան Բիւզանդ «Սերունդի մը Դաստիարակութիւնը», Անթիլիաս, 1962, էջ 120.

[13] Տե՛ս «Ամենուն Տարեգիրք» 1955, էջ 360.

[14] «Արեւելք» տարեգիրք, Հալէպ, 1948, էջ 157-158.

[15] Բերիոյ Թեմի Ազգ. Առաջնորդարանի Թղթածրար /Դարան Դ., գործ 71, 7- Այիս-1953 թուակիր նամակի արաբե-րէն պատճէն, առաքուած կրթութեան նախարարութեան կողմից.

[16] «Արեւելք» օրաթերթ 10 Հոկտեմբեր 1946, թիւ 92, էջ բ.

վարժարաններում»[17]: «Համալսարանական թեքնիք ուսման պայմանը արաբական պաքալորիայի պահանջն էր, ինչ որ պահանջում էր հայկական դպրոցների ուսման ծրագիրի հիմնական փոփոխութիւն»: Հակառակ պարտադրանքին 40ական թթ. վերջերում կառավարութիւնը անյապաղ միջոցներ է ձեռնարկում հայ համայնքի դպրոցների բարելաւման համար[18]:

1952-1967թթ. ազգային կրթական ճակատի վիճակուել էր դիմագրաւել նորանոր տագնապներ: Օրէնքի ամբողջական գործադրութիւնը նշանակում էր վերջ տալ համայնքային վարժարաններին խաթարել հայի դիմագիծը եւ խափանել հայապահպանման աշխատանքները: Այլ խօսքով օրէնքը միտում էր համայնքային վարժարանների փակում, երկսեռ կրթութեան արգելում, դասանիւթերի ճշդում եւ արաբերէն լեզուի պարտադիր ուսուցում[19]: Արտօնւում էր օտար լեզուի դասաւորման դրութիւն: Տարուած աշխատանքների շնորհիւ, պետական շրջանակների մօտ, 1952ի ամրան մեր վարժարանները ստանում են նոր արտօնագիր, որի համաձայն Հալէպի Հայ Առաքելական համայնքի 15 վարժարաններից 11-ի պատասխանատու արտօնատէր է նշանակուել Թեմիս Ս. Առաջնորդը, երեքը ՀԲԸ Միութեան, իսկ Կիլիկեան 2 վարժարանները՝ ենթակայ Կիլիկեան Միութեան: Նաեւ «այս հրամանագրի մէկ յօդուածի համաձայն, հայերէնը օտար լեզու չէր նկատուեր, այլ տեղւոյն մէկ համայնքի գործածական լեզուն, որով կ՚աղօթեն անոնք»[20]:

Սիրիա-Եգիպտոս միացման թուականներին կառավարութեան կողմից առաքուած թիւ 933-7 շրջաբերականը սահմանափակում էր մասնաւոր, ոչ պաշտօնական վարժարանների ինքնակամ գործունէութիւնը[21]: Մասնաւոր

---

[17] «Արեւելք» օրաթերթ 24 Յունիս 1947 թիւ 27/334/ էջ բ.

[18] «Արեւելք» օրաթերթ 25 Յունիս 1946 եւ «Հայաստանի Կոչնակ» Խր. տարի, 11 Սեպտեմբեր 1948, թիւ 37, էջ 880.

[19] Չոլագեան Յակոբ, «Յուշամատեան» Քարէն Եփիփ Ազգ. Ճեմարանի, Հալէպ 1977, էջ 99.

[20] Տեղեկագիր «Սուրիահայ կրթական Կեանքի Մասին» 1955էն-1956 դպրոցական տարեշրջանի. Բերիոյ Թ. Ա. Ա. Թղթ./Դարան Դ., գործ 69/ թերթ 2.

[21] 11-Մարտ 1959, թիւ 20 որոշմնագրով հրահանգուել էր թիւ 160 օրէնքի մասին, որը թիւ /993-7/ շրջաբերականով տեղեկացնում էր մասնաւոր վարժարանների պատասխանատու մարմիններին պետական ծրագրի իրագործմանը, ընդհանրացմանը ոչ պաշտօնական վարժարաններում: Միաժամանակ թոյլատրւում էր մասնաւոր ծրագրի կազմու-թեան 25 առ հարիւր փոփոխութեամբ, պայմանաւ որ բացառիկ ծրագիրը վայելում էր Կրթական Նախարարութեան վաւերացմանը: Ուստի հարկ էր լինելու պատրաստել ու ներկայացնել 25 Յուլիս 1959ին:

դպրոց ասելով նա հասկանում էր այն «ոչ կառավարական հաստատութիւնները, որոնք ամբողջովին եւ կամ մասնակի ծեւով կը զբաղին ուսմամբ եւ կրթութեանմբ եւ ազատ կը պատրաստեն ազատ ասպարէզներու եւ կամ կը զբաղի ոեւէ տեսակի ընդհանուր կրթութեան գործով, առանց նկատի ունենալու հաստատութեան տիրող ազգութիւնը եւ կամ կազմակերպութիւնը, որուն կապուած է հաստատութիւնը»[22]: Կրօնաբարոյական[23], ազգային դիմագիծ վտանգող շրջաբերականը նոր առաջադրանքի առաջ էր դրել ազգային մարմիններին: Յատուկ խորհրդակցական ժողովից յետոյ յարմար էին նկատել բանակցութիւններ սկսել պետական մարմինների հետ: Ժողովը յանգել էր յատուկ ուսումնասիրութեան, որով նախատեսւում էր հայ դպրոցների յատուկ ծրագրի պատրաստութիւն[24]: Վեցամեայ ծրագրով նախակրթարանների համար արտօնւում էր «կրօնագիտութիւնը իբրեւ հայ եկեղեցու ծիսական լեզու եւ դասաւանդուելու էր հայերէն լեզուով»[25]:

1963-1964թթ. կրթական նախարարութիւնը եւս հաստատում էր շրջաբերականով թէ հայերէն լեզուի ուսուցումը չէր արգելւում, սակայն «հայ մշակոյթի անուան տակ ուսուցիչները այլ նպատակներ էին հետապնդում, միաժամանակ չգործածելով արաբերէն ծրագիրը»[26]: Սա պատրուակ էր, որով ձգտում էին կրթօճախների պետականացմանը:

Պետական ծրագիրի ներմուծումն ու որդեգրումը ունենում է դրական ու բացասական անդրադարձ: Սահմանուած կարգափոխութեան օրէնքով ուսանողութեան մտքում արմատանում է, թէ առաջնակարգ կարեւորութիւն ներկայացնող լեզուն արաբերէնն է, որը իւրացնում էին ամէն գնով[27]:

Յիսունական թուականների կէսին տիրող տնտեսական, ընկերային վիճակից սկիզբ է առնում արտագաղթ դէպի Արեւմտեան Եւրոպա եւ Միացեալ Նահանգներ: Մեծ թւով երիտասարդների հոսքը մտահոգել էր մտաւորական-

---

22 Բերիոյ Թեմի Ա. Ա. Թղթ. /Դարան Բ. գործ 50/:

23 Որոշումնագիրը չէր միտեր բացարձակ արաբերէն լեզուի ուսուցմանը, իբրեւ սոսկ լեզու, այլ շեշտում էր դասա-նիւթերի արաբերէն լեզուով պարտաւորիչ դասաւանդմանը:

24 Չոլագեան Յ. «Յուշամատեան» էջ 179.

25 29 Յուլիս 1959 թուակիր եւ 245/7 նախարարական հրահանգով արտօնւում էր հայերէն լեզուով Կրօնի ուսուցումը, իբրեւ ծիսական լեզու: Չոլագեան, նոյն տեղում, էջ 179.

26 Չոլագեան Յ. էջ 204.

27 Նոյն տեղում էջ 152.

ներին, քանզի կատարուածը «այլասերման եւ ուծացման վտանգ էր», սրանով հայ երիտասարդը հեռանում էր ոչ թէ արաբահայութիւնից, այլ հայկականութիւնից: Հակառակ կատարուած զոհողութիւններն երեւոյթը շարունակւում է 1960ական թուականներից ցայսօր: 1967թ. առաքուած յանձնարարագրով Կրթական Նախարարութիւնը հաստատում էր պետական տնօրէնների նշանակումը սեփականատէր տնօրէնութեան կողքին եւ հայերէն լեզուի դասապահերի առաւել նուազումը[28]: Յատուկ հրամանագրով թելադրւում էր մասնաւոր դպրոցների անուանական փոփոխութիւնը: Վերոյիշեալ հրամանագրի պատշաճ բանաձեւը սահմանել էր շաբաթական 40 պահ հայոց լեզուի եւ կրօնագիտութեան դասաւանդում նախակրթարանի, իսկ 24 պահ երկրորդականի «իւրաքանչիւրի նախատեսուել էր չորս պահ հայերէն եւ երկուսը կրօնի համար»: 1967թ. օրէնք-հրամանագրի հրապարակումով ոչ հայկական դպրոցների ղեկավարների ըմբոստութիւնը յոյժ վտագաւոր կացութիւն էր ստեղծել, որը յանգել էր պետական հարմանագրով մի շարք վարժարանների փակման: Այդպիսին էր կաթողիկէ համայքի վարժարանների պարագան: Սակայն շնորհիւ կանխատեսուած պետական տրամադրութիւնների՝ Առաքելական եկեղեցու վարժարանները զերծ են միում փակման հրամանագրից եւ շարունակում են գոյտեւել մինչեւ օրս: 966-1967թթ. հայոց ընդհանուր վարժարանների թիւն էր՝ 59,17940 աշակերտութեամբ[29]:

Եզրակացնելով՝ Սիրիայի գաղթօճախի հանրակրթական վարժարանները իրենց ծագման օրից օգտուել են ներքին ինքնավարութեան իրաւունքից: Դա արտայայտւում էր նրանով, որ հայկական վարժարանները առաջնորդուել են սեփական ուսումնական ծրագրով, իսկ ուսուցման հիմքը եղել է հայոց լեզուն:

Վարժարանները կառուցել ու պահպանել են ծխականների միջոցներով եւ հանդիսացել գաղութի սեփականութիւնը ի դէմս տեղական մարմիններին: Նրանց ղեկավարութիւնը իրագործել է դպրոցական հոգաբարձութիւնը, որը ընտրուած է եղել թեմական կամ համայնքի խորհրդի կողմից:

Սիրիական սահմանադրութիւնը, թէեւ սահմանափակ ձեւով, երաշխաւոր է հաղիսացել ազգային վարժարանների գոյութեանը վերականգնելով գաղութի

---

[28] «Զարթօնք» 22 Հոկտեմբեր 1967, էջ բ. /թիւ 127 օրէնք- հրամանագրի՝ «մերսում»ի հրապարակումը նոր իրաւակարգի առաջ էր դրել հայկական դպրոցների պետերը/.
[29] «Զարթօնք» 22 Հոկտեմբեր 1967.

իրաւունքները վարժարանների վերաբերեալ: Սակայն տարրական ու երկրորդական վարժարաններում սուրիական կրթական նախարարութեան ծրագրի ներմուծմամբ ուսուցման հիմք էր դարձել պետականը եւ լեզուն արաբերէնը: Ծրագրից դուրս էր մնացել հայերէն լեզուի եւ կրօնի ուսուցումը, մինչեւ 1967թ.: Այդ երկուսը, այսպիսով, մտնում էին ոչ պարտադրականների շարքը:

1967թ. թեմական խորհրդի եւ յառաջդիմական ճակատի միջնորդութեամբ կրօնը ճանաչուեց որպէս պարտադիր առարկայ[30], բայց հայոց լեզուն մինչեւ օրս նման ճանաչում չի ունեցել: Այնուամենայնիւ, նախարարութիւնը պատասխանատու էր պետական ծրագրի հետապնդման, իսկ թեմական մարմինները իրենց վրայ էին վերցրել վարժարանների նիւթական պահպանումն ու ամրապնդումն, դպրոցական նոր շէնքի կառուցմանը բոլոր հոգսերը: Բայց սեփականատիրական իրաւունքի տեսակետից վարժարանները գաղութի ազգային հիմնարկներն էին:

Վերջին տասնամեակներին գաղութի ազգային հաստատութիւնները դիմագրաւում են նոր տագնապներ: 1981-1982թթ. Կրթական նախարարութեան կողմից առաքուած կարգափոխութեան օրէնքը մի անգամ եւս ցնցում է գաղութի բոլոր վարժարանների պատասխանատու մարմիններին: Օրէնքը միտում էր միջնակարգի աւարտական տարիքային հարց սահմանել եւ նախարարութեան կողմից ճշդուած գնահատականի ճանապարհով սահմանափակել երկրորդական բաժանունքը գրանցող աշակերտների թուաքանակը[31]: Վերոյիշեալ պայմանները չիրականացնելու դէպքում անհատը զրկւում էր ոչ միայն հայկական վարժարան յաճախելու, այլ ստիպողաբար, հեռանում էր հայեցի միջավայրից ու մթնոլորտից: այդպիսին է եղել արհեստի ու արուեստի բաժանմունքը հետեւող երկրորդական աշակերտներին պարագան:

---

[30] Բերիոյ Թեմի Ա Ա. Թղթ. /Դարան Բ. գործ 55, 9- Սեպտեմբեր-1967 թուակիր նամակի պատճէն:

[31] Առաքուած օրէնքում միջնակարգի պետական քննութեանց մասնակցող աշակերտը հարկ էր ապահովել, տար-իքային սահմանափակման կողքին, նախարարութեան կողմից սահմանուած գումարը / Յաջողութեան ճշդուած գումարի նուազագոյն չափանիշն էր 201/390ից/: Չապահովելու դէպքում անհատը զրկւում է հայկական երկրոր-դական վարժարան յաճախելու: Իսկ երկրորդականի աշակերտների պետական քննութիւնների գնահատականի հիմամբ, նախարարութեան կողմից, ճշդւում էր անհատի համալսարան ընդունման հարցը:

Հայկական վարժարանները նրանց մի շարք առաւելութիւնների կողքին վերջին տասնամեակին կարողացան ընդլայնել մասնագիտական ճիւղաւումը: Մասնաւոր վարժարաններից երկրորդական բաժնի ծրագրում ներառուեց, գիտականի կողքին, գրականը, որ երկու տարիով կարող էր հետեւել եւ ստանալ համապատասխան վկայական:

Վերջին տարիների ընթացքում ուսումնական խորհրդի կողմից բազմաթիւ միջոցներ են կատարուել վարժարանների վիճակը կարգաւորելու, աշակերտների թիւը աւելացընելու, կրթական մակարդակը բարձրացնելու, հայեցի դաստիարակութիւնը ամրապնդելու եւ տնտեսական վիճակը բարելաւելու նպատակով: Հրատարակուել է հայոց լեզուի դասագիրք մասնագէտ ուսուցիչների կողմից: Ձեռնարկել է մանկապատանեկան հանդէս «Ցոլքեր»:

Զգալի փոփոխութիւններ են կատարուել նաեւ հայկական վարժարանների դասաւանդող ուսուցիչների կրթական մակարդակում: Ներկայիս պետական սահմանուած օրէնքով ուսուցչութեան ընդունման պայմաններից է նուազագոյն պետական պաքալորիայի վկայականը:

Սիրահայ վարժարաններում անցկացուում են զանազան մշակութային միջոցառումներ, որոնք կոչուած են պահպանելու հայերի, յատկապէս աճող սերնդի ազգային նկարագրիը: Այսպէս տարբեր մրցոյթներ հայոց լեզուի եւ հայ ժողովուրդի պատմութեան վերաբերեալ, հանդիպումներ Հայաստանից ժամանած հիւրերի հետ,. նշում են հայկական տօներ եւ այլն:

Հայ դպրոցը, ինչպէս իր դարաւոր պատմութեան ընթացքում, այնպէս էլ ժամանակակից փուլում, բացառիկ դեր է կատարում հայ ժողովրդի գոյատեւման, մասնաւորապէս սփիւռքահայութեանը սպառնացող ձուլման եւ ուծացման դէմ մղող պայքարում, քանզի հայ դպրոցն ու դաստիարակութիւնը մի հզօր ուժ են հայոց լեզուն, գրականութիւնը, դարաւոր մշակոյթը, ազգային դէմքը պահպանելու համար: